

ՕԾՎԵՑ ՆՈՎՈԿՈՒԶՆԵՑԿԻ «ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ԵԿԵՂԵՑԻՆ

2008 թվականի օգոստոսի 24-ին, Նովոկուզնեցկ քաղաքի հայ համայնքում պատմական եւ տոնական օր էր, քանզի տեղի հայության երկար սպասված երազանքն իրականություն դարձավ, օծվեց արդեն մի քանի տարի կառուցվող եւ իր ավարտին հասած «Ս. Գրիգոր Լուսավորիչ» եկեղեցին: Պաշտոնական տվյալներով այդ տարածաշրջանում իրենց բնակությունն են հաստատել շուրջ տասներկու հազար հայեր, ովքեր վերջապես ունեցան իրենց աղոթքի տունը:

Պատմական այս օրը, Մոսկվայից Կեմերովոյի շրջանի Նովոկուզնեցկ քաղաք էր այցելել Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի Հայոց Թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տեր Եզրաս Եպիսկոպոս Ներսիսյանը, ով առընթերակայությամբ Մոսկվայի, Կրասնոյարսկի եւ Բառնաուլի հոգևոր հովիվներ Տեր Թադեոս, Տեր Շահան եւ Տեր Մաշտոց քահանաների օժեց եկեղեցու գմբեթի հինգ խաչերը: Հավարտ օծման արարողության սկսվեց Ս. Պատարագը, որի ժամանակ օծվեց ու սրբազործվեց նաեւ բուն տաճարը:

Սրբազան այս արարողությանը իրենց ներկայությունն էին բերել ինչպես Ռուս Ուղղափառ ու Կաթոլիկ Եկեղեցիների, այնպես էլ տեղի մահմեդական համայնքի ներկայացուցիչներ: Ներկա էին նաեւ մարզային եւ քաղաքային իշխանության անդամներ, ի հարեւան Բառնաուլ, Կրասնոյարսկ քաղաքներից տեղի Ծխական համայնքների ատենապետերը, ուխտավորներ եւ բազմաթիվ հավատացյալ հայորդիք:

Հընթացս Պատարագի Առաջնորդ Սրբազան Հայրն իր օրհնության խոսքն ուղղեց բոլոր ներկաներին, պատգամելով, որ կենդանի պահեն այս եկեղեցին իրենց այնտեղ վեր բարձրացնելիք անդադար աղոթքներով եւ նախնյաց նվիրական հավատով անդավաճան ապրելու շնորհընկալ հոգով, որ պետք է վկայի նվիրական սերն առ Հայրենին ու հավատարմությունը առ համայն հայության Սրբություն Սրբոց Էջմիածինը: Մասնավոր գնահատանքի խոսք ուղղեց նաեւ եկեղեցու բարերար, Ծխական Խորհրդի ատենապետ Տիար Սարիկ Աբրահամյանին, ում նախաձեռնությամբ սկսվել ու այսօր իր ավարտին է հասել գեղեցիկ այս տաճարի շինարարությունը:

Ս. Էջմիածնից մի մասնիկ էլ վեր խոյացավ, Մայր հողից կտրված, բայց ազգային նվիրական սրբություններին հավատարիմ տեղի հայության կյանքում, այն վստահությամբ, որ այդ կամարներից վեր բարձրացող աղոթքները հայոց հավատքի Հայր Սբ. Գրիգոր Լուսավորչի բարեխոսությամբ ընդունելի պետք է լինեն Աստուծո առաջ՝ աշխարհացրիվ մեր ժողովրդի բարօրության եւ Մայր Եկեղեցու պայծառության համար:

*ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ  
ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՄԱՍԼՈ ԳԻՎԱՆ*